Լ Ր Ա Տ Ո Ւ ՀՐՈՆԻԿԱ

ԳԻՏԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆ՝ ՆՎԻՐՎԱԾ ԿԱՐԼ ՄԱՐՔՍԻ ԾՆՆԴՅԱՆ 150-ԱՄՅԱԿԻՆ

Մայիսի 12—13-ը ՀՍՍՀ ԳԱ նիստերի դահլիճում տեղի ունեցավ ՍՄԿԿ Կենտկոմին առընթեր մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական ֆիլիալի և ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի համատեղ գիտական նստաշրջանը՝ նվիրված գիտական կոմունիզմի հիմնադիր Կ. Մարքսի ծննդյան 150-ամյակին։

Գիտական նստաշրջանը ներածական խոսքով բացեց Հայաստանի կոմկուսի Կենտկոմի քարտուղար Գ. Արզումանյանը։

«Կարլ Մարքսը և գիտական կոմունիզի հիմնավորումը» զեկուցումով հանդես եկավ ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս, հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար Ծ. Աղայանը։ Մարքսը, ասաց նա, աշխարհը վերափոխող իր ամենազոր ուսմունքով նմանը չունեցող գիտական մտքի մի հսկա էր։ Իր բազմաթիվ աշխատություններում նա ոչ միայն ցույց տվեց կապիտալիզմի արատներն ու անկման անխուսափելիությունը, այլև ճշմարտացիորեն որոշեց հին աշխարհի խորտակման և սոցիալիստական հասարակարգի ստեղծման ուղիներն ու հեռանկարները։

ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Ա. Առաքելյանի զեկուցումը նվիրված էր «Կարլ Մարքսը և սոցիալիզմի քաղաքատնտեսության պրոբլեմները» թեմային։ Զեկուցողը մանրամասն անդրադարձավ սոցիալական տարբեր բովանդակություն ունեցող տնտեսական օրենքների և կատեգորիաների մասին մարքսյան դրույթներին, արդի փուլում սոցիալիստական էկոնոմիկայի կարևոր խնդիրներին։

ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Ա. Կարինյանը «Կարլ Մարքսը և մշակույթի հարցերը» զեկուցման մեջ լուսաբանեց Կարլ Մարքսի նախասիրությունները ժողովուրդների մշակույթների նկատմամբ։ Նա նշեց, որ Մարքսը մեծ հետաքրքրություն է հանդես բերել ռուսական իրականության, նրա պատմության, մշակույթի, քաղաքական իրադարձությունների ու հեղափոխության նկատմամբ։

Տնտեսագիտական գիտությունների թեկնածու Ա. Եղիազարյանի զեկուցումը նվիրված էր «Կարլ Մարքսը և ազգային հարցը» թեմային։ Զեկուցողը նշեց, որ գիտական կոմունիզմի հիմնադիրներ Մարքսն ու Էնգելսը «Գերմանական գաղափարախոսությունը», «Կոմունիստական կուսակցության մանիֆեստը» և մի շարք այլ աշխատություններում դրել են ազգային հարցի տեսության հիմքերը։

Պատմության մատերիալիստական ըմբռնման մարքսյան տեսության լուսաբանությանն էր նվիրված պատմական գիտությունների դոկտոր Լ. Բաբայանի «Կարլ Մարքսի պատմության մատերիալիստական ըմբռնման տեսությունը» զեկուցումը։

Պատմական գիտությունների թեկնածու Վ. Ավետիսյանը «Հայաստանում մարքսիզմի տարածման պատմությունից» թեմայով զեկուցման մեջ նշեց, որ դեռևս 1887 թ. արտասահմանում հայերեն թարգմանվել է «Կոմունիստական կուսակցության մանիֆեստը», որը, սակայն, գրաքննչական նկատառումներով լույս չի տեսել։ Անդրադառնալով հայ իրականության մեջ մարքսիզմի տարածմանը, զեկուցողը ասաց, որ ինչպես Ռուսաստանում, այնպես էլ Հայաստանում մարքսիզմի տարածումը և հեղափոխական սոցիալ-դեմոկրատիայի զարգացումն ընթացան Վ. Ի. Լենինի ղեկավարությամբ և գաղափարական ազդեցությամբ։ Ստեղծվեցին նաև հայ մարքսիստական խմբակներ, որոնք հսկայական գործունեություն ծավալեցին մարքսիստական գաղափարների տարածման ուղղությամբ։

Պատմական գիտությունների թեկնածու Վ. Ղազանչյանը «Կարլ Մարքսի և Ֆրիդրիխ Էնգելսի երկերի հայերեն հրատարակությունը» զեկուցման մեջ խոսեց գիտական կոմունիզմի հիմնադիրների գործերի հայերեն թարգմանության և հրատարակման, ինչպես նաև հայ հեղափոխական մտքի զարգացման գործում այդ երկերի ունեցած հրսկայական նշանակության մասին։

Ա. ՍԱՌԱՂՅԱՆ